

ԿԱՐԾԻՔ

**Բաբայան Քրիստինե Արայի «Իսպաներենի երկրագիտական
բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» թեմայով
ԺԳ.00.02 — «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» /իսպաներեն
լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության
վերաբերյալ**

Քրիստինե Արայի Բաբայանի «Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը նվիրված է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի արդիական և գիտագործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներից մեկին՝ իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության, ներմուծման, յուրացման և ակտիվ կիրառման մեթոդական համակարգի մշակմանը: Աշխատանքի առանցքում գտնվում է ոչ միայն իսպաներենի բառապաշարի ուսուցման հարցը, այլև լեզվական, մշակութային, հանրամշակութային, գործաբանական և միջմշակութային կարողունակությունների ձևավորման համալիր գործընթացը, ինչը տվյալ հետազոտությանը հաղորդում է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական արժեք:

Ատենախոսության թեմայի արդիականությունն ակնհայտ է մի քանի առումներով: Նախ՝ ժամանակակից օտար լեզվի ուսուցումը վաղուց այլևս չի սահմանափակվում բառապաշարի, քերականական ձևերի և հաղորդակցական կաղապարների մեխանիկական յուրացմամբ: Օտար լեզվի լիարժեք տիրապետումը ենթադրում է տվյալ լեզուն կրող ժողովրդի կամ ժողովուրդների մշակույթի, պատմության, արժեքային համակարգի, հաղորդակցական վարքագծի, առօրյա մտածելակերպի և սոցիալական իրողությունների ճանաչում: Այս տեսանկյունից

երկրագիտական բառապաշարը հանդես է գալիս ոչ թե որպես սովորական բառային շերտ, այլ որպես մշակութային տեղեկատվության, պատմական հիշողության, սոցիալական փորձի և միջմշակութային հաղորդակցության կրող: Հետևաբար, այդ բառապաշարի ուսուցման մեթոդիկայի մշակումն անմիջականորեն առնչվում է օտար լեզվի դասավանդման ժամանակակից նպատակներին:

Երկրորդ՝ հայաստանյան կրթական միջավայրում իսպաներենի ուսուցումն ունի որոշակի ավանդույթներ, սակայն իսպաներենի երկրագիտական բառապաշարի համակարգված, համակցված և հայախոս լսարանի առանձնահատկությունները հաշվի առնող ուսուցման խնդիրը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ: Ատենախոսության մեջ իրավացիորեն ընդգծվում է, որ Հայաստանի կրթական համակարգում շրջանառվող իսպաներենի երկրագիտական դասագրքերն ու ձեռնարկները հիմնականում ստեղծված են այլ լեզվամշակութային միջավայրերի համար և միշտ չէ, որ հաշվի են առնում հայախոս ուսանողների լեզվական, մշակութային և ճանաչողական առանձնահատկությունները: Այս հանգամանքը հատկապես կարևոր է, քանի որ երկրագիտական բառապաշարի յուրացումը չի կարող լիարժեք լինել առանց մայրենի լեզվի, երկրորդ օտար լեզվի և թիրախային լեզվի միջև առկա զուգադրական ու միջմշակութային կապերի գիտակցված կիրառման:

Երրորդ՝ աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ իսպաներենը համաշխարհային հաղորդակցության կարևոր լեզուներից է: Իսպաներեն լեզուն ներկայացնում է ոչ միայն Իսպանիայի, այլև Լատինական Ամերիկայի բազմաթիվ երկրների պատմամշակութային, քաղաքական, սոցիալական և քաղաքակրթական իրողություններ: Այդ պատճառով իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցումը պետք է դիտարկվի բազմամշակութային համատեքստում: Հեղինակը փորձում է այդ խնդիրը լուծել ոչ թե նեղ լեզվաբանական,

այլ ինտեգրված լեզվադիդակտիկական մոտեցմամբ՝ միավորելով երկրագիտական, լեզվաերկրագիտական, հայրենագիտական, տարածաշրջանային և միջմշակութային բաղադրիչները:

Ատենախոսության մեջ հետազոտության նպատակը հստակ ձևակերպված է: Այն է՝ ուսումնասիրել «Իսպանիայի երկրագիտություն» դասընթացի կազմակերպման և նախագծման տեսությունները, մեթոդաբանական մոտեցումներն ու հայեցակարգերը և մշակել երկրագիտական բառապաշարի ընտրության ու ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգ: Այս նպատակը համապատասխանում է հետազոտության տրամաբանությանը և ամբողջ աշխատանքի կառուցվածքին: Հետազոտության օբյեկտ է ընտրված օտար լեզուներով, մասնավորապես իսպաներենով և անգլերենով, երկրագիտության ուսուցումն օտար լեզուների ֆակուլտետում, իսկ առարկան՝ իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման գործընթացը: Նման սահմանումը հնարավորություն է տալիս ուսումնասիրության դաշտը պահել մեթոդական հստակության մեջ՝ միաժամանակ չկորցնելով միջմշակութային ու լեզվաբանական լայն համատեքստը:

Հետազոտության վարկածը նույնպես բխում է առաջադրված խնդրից: Ըստ հեղինակի՝ իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցումը կարող է արդյունավետ դառնալ, եթե հաշվի առնվեն հայերենի, իսպաներենի և անգլերենի լեզվաբանական ու մեթոդական տիպականացման առանձնահատկությունները, կիրառվեն փոխներգործուն ռազմավարություններ, և մշակվի տվյալ դասընթացի կազմակերպման դինամիկ ու օրինակելի մեթոդական համակարգ: Այս վարկածը հիմնավոր է, քանի որ երկրագիտական բառապաշարի յուրացումը, հատկապես հայախոս լսարանում, անխուսափելիորեն առնչվում է լեզուների փոխազդեցության, մշակութային իմաստների համադրման, միջլեզվական միջամտությունների

կանխման և հաղորդակցական իրավիճակներում բառապաշարի կիրառման խնդիրներին:

Ատենախոսության առաջադիր խնդիրները տրամաբանորեն բխում են հետազոտության նպատակից: Հեղինակը նախատեսել է ուսումնասիրել իսպաներենի երկրագիտական դասընթացում բառապաշարի տարբեր շերտերի ներմուծմանը, ուսուցմանը և յուրացմանը վերաբերող լեզվաբանական ու մեթոդական գրականությունը, հստակեցնել «Իսպանիայի երկրագիտություն» դասընթացին առնչվող հասկացություններն ու եզրույթները, հիմնավորել երկրագիտության և հայրենագիտության, առաջին և երկրորդ օտար լեզուների երկրագիտական բառապաշարի համալիր, համակարգված ու ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը, ինչպես նաև մշակել իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգ: Նշված խնդիրները ոչ միայն ամբողջական են, այլև համապատասխանում են ատենախոսության երկու գլուխների ներքին կառուցվածքին:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը բավականին լայն է: Հեղինակը հենվում է միջմշակութային-մշակութաբանական, հաղորդակցական-ճանաչողական, հանրամշակութային, տարածաշրջանային-երկրագիտական, կոմպետենտային, դրդապատճառային, տրամախոսական, քաղաքակրթական և պատմագիտական մոտեցումների վրա: Այս բազմաբաղադրիչ մեթոդաբանական հիմքը արդարացված է, քանի որ հետազոտվող խնդիրը միաժամանակ ունի լեզվաբանական, մեթոդական, մշակութաբանական և մանկավարժական բնույթ: Հեղինակը կատարել է գրականության վերլուծություն, երկրագիտական տեքստերի և խոսույթների շուրջ մշակված վարժությունների փորձարկում, դիտում, համեմատություն, չափում, հարցազրույց, անկետավորում, գրույց, չափանիշների մշակում, փորձարարական ուսուցման կազմակերպում և արդյունքների քանակական ու որակական

վերլուծություն: Այս մեթոդների համադրությունը հնարավորություն է տվել ոչ միայն տեսականորեն հիմնավորել առաջադրված դրույթները, այլև փորձարարական եղանակով ստուգել դրանց արդյունավետությունը:

Ատենախոսության գիտական նորույթը, ըստ էության, դրսևորվում է մի քանի ուղղություններով: Նախ՝ մշակվել և գիտականորեն հիմնավորվել է իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման համալիր ռազմավարություն, որը միտված է լեզվական, մշակութային և հաղորդակցական բաղադրիչների համադրմանը: Երկրորդ՝ հստակեցվել են փորձարարական ուսուցման ընթացակարգերը, մեթոդները և ռազմավարությունները լեզվաբանական ու մեթոդական տիպականացման տեսանկյունից: Երրորդ՝ հիմնավորվել է իսպաներենի, անգլերենի և հայերենի բառային, մշակութային, միջմշակութային և գործաբանական փոխներթափանցման երևույթների կանխման ու հաղթահարման մեթոդական համակարգը: Չորրորդ՝ առաջարկվել է երկրագիտական բառապաշարի ուսուցման փուլային մոդել, որը ապահովում է բառապաշարի իմաստային ընկալումը, ակտիվացումը և գործնական կիրառումն իրական հաղորդակցական իրավիճակներում: Նշված նորույթները վկայում են, որ հեղինակը փորձել է ոչ միայն նկարագրել առկա մեթոդական վիճակը, այլև առաջարկել իր սեփական մեթոդական լուծումը:

Աշխատանքի տեսական նշանակությունն այն է, որ ուսումնասիրվել և համակարգվել են իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման տեսական ու մեթոդաբանական հիմքերը, առանձնացվել են համապատասխան ռազմավարություններ, մոտեցումներ և տեխնոլոգիաներ, ինչպես նաև ստեղծվել իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման օրինակելի կադապար: Հեղինակի դիտարկումները կարևոր են հատկապես այն առումով, որ երկրագիտական բառապաշարը ներկայացվում է ոչ թե որպես մեկուսացված

բառային նյութ, այլ որպես միջմշակության հաղորդակցության, լեզվամշակության իրազեկության և հաղորդակցական կարողունակության ձևավորման միջոց:

Աշխատանքի գործնական նշանակությունը նույնպես ակնհայտ է: Հեղինակը մշակել է նախախոսքային, խոսքային, թարգմանական առաջադրանքների և վարժությունների դինամիկ համակարգ, որը կարող է կիրառվել իսպաներենի երկրագիտական ուղղվածության դասընթացներում: Այդ համակարգը կարող է օգտակար լինել մասնագիտական իսպաներենի նոր դասընթացների նախագծման, դասագրքահամալիրների կազմման, բուհական ծրագրերի արդիականացման և ուսանողների հաղորդակցական ու միջմշակության կարողունակությունների զարգացման գործում: Հատկապես կարևոր է այն, որ առաջարկվող համակարգում տեղ են գտել տեքստային աշխատանքը, նախագծային մեթոդը, լեզվաերկրագիտական թղթապանակը, քննարկումները, փոխներգործում դասախոսությունները, սեմինարները, դերային և դերասյուժետային խաղերը, երգերի, ֆիլմերի, ռադիոհաղորդումների և այլ նյութերի կիրառումը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Կառուցվածքը տրամաբանական է և համապատասխանում է հետազոտության նպատակին: Առաջին գլուխը՝ «Լեզվաերկրագիտական իրազեկության զարգացման առանձնահատկությունները լեզվական բուհում», նվիրված է իսպաներենի երկրագիտության բուհական դասընթացի առանձնահատկությունների, դրա բաղադրամասերի և հանրամշակության իրոյթների ուսուցման խնդրի վերլուծությանը: Երկրորդ գլուխը՝ «Իսպաներենի դասընթացի միջոցով երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական հիմունքները», ունի ավելի կիրառական և մեթոդական ուղղվածություն: Այստեղ քննարկվում են իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական հիմունքները, անհամարժեք

բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները, երկրագիտական, հայրենագիտական և տարածաշրջանային բաղադրամասերի համամասնական ուսուցման հարցերը, ինչպես նաև ներկայացվում է մշակված մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական հիմնավորումը:

Առաջին գլխում հեղինակն իրավացիորեն ելնում է այն դրույթից, որ Իսպանիայի երկրագիտությունը բուհական օտար լեզվի դասընթացում պետք է դիտարկվի ոչ միայն որպես տեղեկատվական առարկա, այլև որպես լեզվամշակութային և միջմշակութային կարողունակությունների զարգացման միջոց: Հեղինակը ներկայացնում է երկրագիտության և լեզվաերկրագիտության տարբերակման խնդիրը, անդրադառնում է համապատասխան գիտական ավանդույթներին, ցույց տալիս, որ երկրագիտությունը, լեզվաերկրագիտությունը և մշակութային բաղադրիչ ունեցող բառապաշարի ուսուցումը պետք է դիտարկվեն փոխկապակցված: Գլխում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում իսպանալեզու մարդկանց հաղորդակցական վարքագծի, խոսքային վարվելակերպի, մշակութային արժեքների, պատմամշակութային իրողությունների և սոցիալական խնդիրների ուսումնասիրությանը: Այս մոտեցումն արժանի է դրական գնահատականի, քանի որ օտար լեզվի ուսուցման ժամանակ լեզվակրի հաղորդակցական վարքագծի անտեսումը հաճախ հանգեցնում է մակերեսային լեզվական կարողությունների ձևավորմանը:

Հեղինակի կարևոր դիտարկումներից մեկն այն է, որ «Իսպանիայի երկրագիտություն» դասընթացը պետք է ունենա ոչ միայն ճանաչողական, այլև գործաբանական և արժեքաբանական ուղղվածություն: Ուսանողը պետք է ոչ միայն իմանա Իսպանիայի աշխարհագրությունը, պատմությունը, մշակութային կոթողները կամ քաղաքական իրողությունները, այլև կարողանա հասկանալ, թե ինչպես են այդ իրողություններն արտացոլվում լեզվում, հաղորդակցական վարքագծում, խոսքային

ձևակերպումներում, փոխհարաբերությունների կանոններում և լեզվամշակութային արժեքներում: Այս տեսանկյունից հեղինակի կողմից առաջադրված երկրագիտական բառապաշարի ուսուցման գաղափարը լիովին համահունչ է ժամանակակից օտար լեզուների դասավանդման կոմպետենտային մոտեցմանը:

Առաջին գլխում արժեքավոր է նաև դրդապատճառային բաղադրիչի քննությունը: Հեղինակը ցույց է տալիս, որ ուսանողների մոտ իսպաներենի և Իսպանիայի երկրագիտության ուսումնասիրման շարժառիթները բազմազան են: Դրանք կարող են լինել մասնագիտական, հաղորդակցական, ճանաչողական, մշակութային, զբոսաշրջային կամ ուսումնական: Ատենախոսության մեջ ներկայացված հարցախույզները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այն մասին, թե ուսանողներն ինչ նպատակներով են ուսումնասիրում իսպաներենը և ինչ դեր են վերագրում երկրագիտական բաղադրիչին: Հատկապես կարևոր է թարմացված հարցաշարի կիրառումը, որի միջոցով հեղինակը փորձել է վերանայել նախորդ տարիների տվյալները և դրանք համադրել արդի կրթական միջավայրի պահանջների հետ:

Առաջին գլխի եզրակացությունները հիմնականում բխում են կատարված վերլուծությունից: Հեղինակը նշում է, որ իսպաներենի երկրագիտական դասընթացը ներառում է գործունային, արժեքանական, գործաբանական և ճանաչողական հայեցակերպեր: Աշխատանքում հիմնավորվում է, որ ուսանողները պետք է ձեռք բերեն գիտելիքներ ոչ միայն Իսպանիայի և իսպանալեզու երկրների պատմության, աշխարհագրության, մշակույթի և ազգային յուրահատկությունների մասին, այլև լեզվակիրների հաղորդակցական և խոսակցական վարքագծի, խոսքային վարվեցողության նորմերի, իրական խոսքային իրավիճակների վերաբերյալ: Կարևոր է նաև հեղինակի այն միտքը, որ ուսանողները պետք է ձևավորեն երկրագիտական

տեղեկության հետ աշխատելու մշակույթ՝ կարողանալով ընտրել, վերլուծել, համեմատել և իրական հաղորդակցական իրավիճակներում կիրառել ստացված գիտելիքը:

Երկրորդ գլուխը ատենախոսության առավել գործնական և մեթոդական նշանակություն ունեցող բաժինն է: Այստեղ հեղինակը ներկայացնում է իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական հիմունքները՝ շեշտադրելով, որ բառապաշարի ուսուցումը չի կարող սահմանափակվել բառերի թարգմանությամբ կամ դրանց մեխանիկական հիշողությամբ: Երկրագիտական բառապաշարը, հատկապես անհամարժեք կամ ազգամշակութային նշութավորում ունեցող բառապաշարը, պահանջում է իմաստային, մշակութային և հաղորդակցական համատեքստի բացահայտում: Հեղինակը իրավացիորեն ընդգծում է, որ այդպիսի բառապաշարի ուսուցման ժամանակ անհրաժեշտ է կիրառել լրացման, կրկնության, փոխատեղման, փոխակերպման, տեղադրման, բազմակի ընտրության, թարգմանական և ստեղծագործական վարժություններ՝ դրանք կապելով իրական խոսքային իրավիճակների հետ:

Աշխատանքի ուշագրավ կողմերից է «թարգմանչի կեղծ բարեկամների» խնդրի ընդգրկումը երկրագիտական բառապաշարի ուսուցման մեջ: Հայերեն, անգլերեն և իսպաներեն լեզուների համադրության պայմաններում նման բառային միավորները կարող են առաջացնել միջլեզվական միջամտություն, սխալ իմաստավորում և հաղորդակցական թյուրըմբռնում: Հեղինակի մոտեցումն այն է, որ այսպիսի երևույթների հետ աշխատանքը պետք է լինի գիտակցված և մեթոդապես կազմակերպված: Սա կարևոր է հատկապես հայախոս ուսանողների համար, որոնք հաճախ իսպաներենը ուսումնասիրում են արդեն մեկ կամ երկու օտար լեզվի հիմքի վրա: Այդ պայմաններում անգլերենի ազդեցությունն իսպաներենի բառապաշարի ընկալման վրա կարող է լինել ինչպես օգնող, այնպես էլ խանգարող գործոն:

Երկրորդ գլխում ներկայացված վարժությունների համակարգը ցույց է տալիս, որ հեղինակը փորձել է ուսուցման գործընթացը կառուցել փուլային տրամաբանությամբ՝ բառի ներմուծումից մինչև դրա ակտիվ կիրառումը խոսքի մեջ: Առաջարկվող վարժությունները ներառում են թեմատիկ բառերի ճանաչում, հոմանիշների որոնում, բառերի խմբավորում, բազմակի ընտրության առաջադրանքներ, տեքստի հիման վրա իմաստային մեկնաբանում, նախախոսքային քննարկումներ, թարգմանական աշխատանքներ, դարձվածային միավորների փոխարինում և այլն: Դրանք ուղղված են ոչ միայն բառապաշարի ամրապնդմանը, այլև ուսանողների վերլուծական, համեմատական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Այս առումով աշխատանքը ունի հստակ մեթոդական արժեք:

Հատկապես դրական է այն, որ հեղինակը երկրագիտական բառապաշարի ուսուցման մեջ ընդգրկում է հայրենագիտական և տարածաշրջանային բաղադրիչները: Օտար լեզվի ուսուցման ժամանակ սովորողը պետք է կարողանա ոչ միայն հասկանալ օտար մշակույթը, այլև իր սեփական մշակույթը ներկայացնել թիրախային լեզվով: Այս կարողությունը միջմշակութային հաղորդակցության հիմնական բաղադրիչներից մեկն է: Աշխատանքում հիմնավորվում է, որ Իսպանիայի և իսպանալեզու երկրների իրողությունները պետք է ուսուցանվեն համեմատական դաշտում՝ Հայաստանի պատմամշակութային, հասարակական և լեզվամշակութային իրողությունների հետ հարաբերակցության մեջ: Այս մոտեցումը նպաստում է ուսանողների ոչ միայն լեզվական, այլև ինքնաճանաչողական և մշակութային միջնորդության կարողությունների զարգացմանը:

Ատենախոսության կարևոր առավելություններից է փորձարարական ուսուցման կազմակերպումը: Հեղինակը ներկայացնում է, որ գիտափորձին մասնակցել է 122 ուսանող, ձևավորվել են փորձարարական և ստուգողական/ստուգիչ/

խմբեր, կիրառվել է 20 բալանոց գնահատման համակարգ, մշակվել են երկրագիտական կարողունակության գնահատման չափանիշներ: Այդ չափանիշները վերաբերում են Իսպանիայի բնակչության կազմին և քաղաքական աշխարհագրությանը, դասընթացի հիմնական հասկացություններին, Իսպանիայի և նախկին գաղութների պատմամշակութային իրողություններին, երիտասարդական կազմակերպություններին, սոցիալական խնդիրներին, մշակութային և պատմական հուշարձաններին, լեզվակիրների հաղորդակցական և խոսքային վարքագծին, խոսքային վարվելակերպի նորմերին, իսպանացիների կենսակերպին և մտածելակերպին, իրական խոսքային իրավիճակներին և ժամանակակից Իսպանիայի քաղաքական կյանքին: Նման չափանիշների բազմակողմանիությունը վկայում է, որ հեղինակը երկրագիտական կարողունակությունը դիտարկում է ոչ թե նեղ տեղեկատվական, այլ ինտեգրված մեթոդական հարթության վրա:

Փորձարարական արդյունքները ներկայացված են աղյուսակներով և գծապատկերներով: Ըստ հետազոտության՝ փորձարարական խմբում արձանագրվել է զգալի առաջընթաց, որն ավելի բարձր է եղել, քան ստուգողական խմբում: Հեղինակը օգտագործել է վիճակագրական վերլուծություն՝ զույգ ընտրանքների t-թեստ և անկախ ընտրանքների t-թեստ, ինչը կարևոր է աշխատանքի արդյունքների գիտական հավաստիության տեսանկյունից: Ներկայացված տվյալների համաձայն՝ փորձարարական խմբում միջին աճը կազմել է 5.55 միավոր, իսկ ստուգողական խմբում՝ 1.73 միավոր: Փորձարարական խմբի առաջընթացը գնահատվել է մոտավորապես 49 տոկոս, իսկ ստուգողական խմբինը՝ 16 տոկոս: Խմբերի առաջընթացի միջև տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է: Այս տվյալները հիմնավորում են հեղինակի վարկածը, ըստ որի՝ մշակված մեթոդական համակարգը նպաստում է իսպաներենի երկրագիտական բառապաշարի արդյունավետ յուրացմանը և երկրագիտական կարողունակության զարգացմանը:

Աշխատանքի արդյունքները ցույց են տալիս, որ մշակված մեթոդական մոտեցումը հատկապես արդյունավետ է այն դեպքերում, երբ ուսանողներն աշխատում են իրական հաղորդակցական իրավիճակներ ներկայացնող նյութերի, մշակութային խնդիրների, սոցիալական իրողությունների, ֆիլմերի, երգերի, հրապարակախոսական և գեղարվեստական տեքստերի շուրջ: Հեղինակը նկատում է, որ փորձարարական ուսուցման ընթացքում փոխվել է նաև ուսանողների վերաբերմունքն իսպանական մշակույթի հանդեպ: Եթե սկզբնական փուլում նրանց հետաքրքրությունը հիմնականում սահմանափակվում էր փաստագրական գիտելիքներով, ապա փորձարարական ուսուցման ավարտին նրանք դրսևորել են ավելի խորքային հետաքրքրվածություն մշակութային երևույթների, արժեքային համակարգի և հասարակական իրողությունների հանդեպ: Սա կարևոր դիտարկում է, քանի որ օտար լեզվի ուսուցման արդյունավետությունը չի չափվում միայն բառային միավորների քանակական յուրացմամբ: Այն նաև արտահայտվում է սովորողի մոտ ձևավորվող արժեքային, ճանաչողական և հաղորդակցական ներգրավվածությամբ:

Երկրորդ գլխի եզրակացություններում հեղինակը հիմնավորում է, որ իսպաներենի երկրագիտության դասընթացը պետք է դիտարկել որպես լեզվամշակութային կրթության ամբողջական համակարգ: Այդ համակարգը միավորում է լեզվական գիտելիքը, մշակութային իրազեկությունը և հաղորդակցական կարողունակությունը: Աշխատանքի այս ընդհանուր եզրահանգումը մեթոդապես հիմնավոր է և համահունչ է ժամանակակից լեզվակրթության ուղղություններին: Հեղինակը ճիշտ է նկատում, որ երկրագիտական բառապաշարի ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է համակարգված, փուլային և միջմշակութային ուղղվածությամբ մեթոդական մոտեցմամբ:

Ատենախոսության ընդհանուր եզրակացությունները բխում են կատարված հետազոտությունից: Դրանցում շեշտադրվում է ժամանակակից երկրագիտական

ուղղվածության դասընթացներում գործաբանական հայեցակերպի դերը, տեղեկատվական և մշակութային բացերի շուրջ աշխատանքի անհրաժեշտությունը, առարկայական և ոճական անհամարժեքությունների կարևորությունը, մշակութային ֆոնդի լակունաների յուրացման բարդությունը, երկրագիտական խոսույթի միջոցով բառապաշարի ներմուծման անհրաժեշտությունը, հայրենագիտական բաղադրիչի դերը ուսանողների ինքնուրույն աշխատանքի և ինքնակրթության ձևավորման մեջ, ինչպես նաև փորձարարական ուսուցման արդյունքներով ստեղծված կադապարի արդյունավետությունը: Եզրակացությունները ամբողջացնում են աշխատանքի տեսական և փորձարարական մասերը և վկայում են, որ հետազոտության նպատակը հիմնականում իրականացված է:

Աշխատանքի հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են մի քանի գործոններով: Նախ՝ հեղինակը հիմնվել է հայրենական և օտարալեզու գիտական գրականության լայն շրջանակի վրա: Երկրորդ՝ հետազոտությունն իրականացվել է մի քանի փուլերով՝ գրականության ուսումնասիրություն, հաստատող գիտափորձ, փորձարարական ուսուցում, արդյունքների ամփոփում և թարմացված հարցաշարի կիրառում: Երրորդ՝ հետազոտության արդյունքները ներդրվել են բուհական միջավայրում: Չորրորդ՝ ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են վեց գիտական հոդվածներում: Այս ամենը վկայում է, որ աշխատանքն ունի բավարար փորձաքննություն և գիտագործնական հիմք:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, արդիականությունը, նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները և աշխատանքի կառուցվածքը: Սեղմագրի հիման վրա հնարավոր է ընդհանուր պատկերացում կազմել ատենախոսության գիտական ուղղվածության, մեթոդաբանական հիմքերի և հիմնական արդյունքների մասին: Այն

համապատասխանում է թեկնածուական ատենախոսության սեղմագրին ներկայացվող հիմնական պահանջներին:

Ատենախոսության դրական կողմերի շարքում հատկապես պետք է առանձնացնել հետևյալները:

Առաջին՝ թեման արդիական է և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևորություն: Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման խնդիրը հայաստանյան լեզվակրթական միջավայրում իսկապես կարիք ունի համակարգված ուսումնասիրության:

Երկրորդ՝ աշխատանքում երկրագիտական բառապաշարը դիտարկվում է լայն միջմշակութային և հաղորդակցական համատեքստում: Հեղինակը չի սահմանափակվում բառապաշարի մեխանիկական ուսուցմամբ, այլ այն կապում է լեզվակիրների մտածելակերպի, խոսքային վարքագծի, պատմամշակութային իրողությունների և սոցիալական կյանքի հետ:

Երրորդ՝ դրական է հայերենի, անգլերենի և իսպաներենի զուգադրական մոտեցման կիրառումը: Սա հատկապես կարևոր է հայախոս ուսանողների համար, որոնց լեզվական փորձը հաճախ ձևավորվում է միաժամանակ մի քանի լեզուների ազդեցությամբ:

Չորրորդ՝ աշխատանքում մշակված վարժությունների համակարգն ունի կիրառական արժեք: Այն կարող է օգտագործվել ինչպես իսպաներենի երկրագիտական դասընթացներում, այնպես էլ մասնագիտական իսպաներենի, թարգմանության, միջմշակութային հաղորդակցության և լեզվաերկրագիտության դասընթացներում:

Հինգերորդ՝ փորձարարական բաժինը աշխատանքին հաղորդում է գիտական հիմնավորվածություն: Հեղինակը փորձել է ոչ միայն տեսականորեն պաշտպանել իր մոտեցումը, այլև ստուգել դրա արդյունավետությունը ուսանողների խմբերի հետ:

Վեցերորդ՝ աշխատանքը կարևորում է ուսանողի ինքնուրույնությունը, քննադատական մտածողությունը, հետազոտական գործունեությունը և մշակութային համեմատության կարողությունը: Սա լիովին համապատասխանում է ժամանակակից բուհական կրթության պահանջներին:

Միաժամանակ, ինչպես ցանկացած գիտական աշխատանք, այս ատենախոսությունը ևս զերծ չէ որոշ դիտարկումներից և առաջարկություններից, որոնք հիմնականում կրում են բարելավման և հստակեցման բնույթ:

Առաջին դիտարկումը վերաբերում է եզրութային դաշտին: Աշխատանքում գործածվում են «երկրագիտություն», «լեզվաերկրագիտություն», «երկրագիտական բառապաշար», «անհամարժեք բառապաշար», «ազգամշակութային նշութավորում ունեցող բառապաշար», «հանրամշակութային իրույթներ» և այլ հասկացություններ: Թեև հեղինակն անդրադառնում է դրանց բովանդակությանը, ցանկալի կլիներ ատենախոսության սկզբնական հատվածում տալ առավել համակարգված եզրութային աղյուսակ կամ սահմանումների ամբողջական ենթաբաժին: Դա կօգներ ընթերցողին ավելի հստակ տարբերակել հարակից հասկացությունները և տեսնել դրանց փոխհարաբերությունը հետազոտության ընդհանուր մեթոդական համակարգում: Եզրութային դաշտի նկատառումներին է պատկանում նաև «ստուգողական» եզրութի կիրառումը/ /Տե՛ս էջ 130, էջ 133, էջ 137/;: մինչդեռ գիտահետազոտական շրջանակում կիրառվում է «ստուգիչ» եզրութը, ինչպես նաև հեղինակի կողմից նշված «Իսպանիայի 52 պրովինցիաները» /Տե՛ս էջ 42/, որոնք թարգմանված են որպես «նահանգներ» կամ «ներքին նահանգներ»:

Երկրորդ դիտարկումը վերաբերում է հայաստանյան կրթական իրականության հետ կապին: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ ՀՀ-ում իսպաներենի երկրագիտական ուսուցման համար օգտագործվող նյութերի մեծ մասը ստեղծված է արտերկրում և միշտ չէ, որ համապատասխանում է հայախոս լսարանի կարիքներին: Այս միտքը կարևոր է, և ցանկալի կլիներ այն ավելի լայն զարգացնել՝ ներկայացնելով հայաստանյան բուհերում իսպաներենի դասավանդման ծրագրային վիճակի, դասագրքային բազայի և ուսանողների կարիքների ավելի մանրամասն վերլուծություն:

Երրորդ՝ վարժությունների և առաջադրանքների համակարգը հարուստ է և բազմազան, սակայն որոշ դեպքերում դրանց մեթոդական դասակարգումը կարող էր լինել ավելի հստակ: Օրինակ՝ հնարավոր էր առանձնացնել նախախոսքային, ընկալողական, վերարտադրողական, ստեղծագործական, թարգմանական, միջմշակութային և նախագծային առաջադրանքների առանձին խմբեր՝ նշելով յուրաքանչյուր խմբի նպատակը, կիրառման փուլը և ակնկալվող արդյունքը: Սա կբարձրացներ աշխատանքի կիրառական հարմարավետությունը դասավանդողների համար:

Չորրորդ՝ աշխատանքում առկա են որոշ լեզվաոճական, խմբագրական և տեխնիկական վրիպակներ, մասնավորապես.

1/Եզրույթի կամ հասկացության սխալ թարգմանություն՝

Համեմատական տեսանկյունից ներկայացնելով երկրագիտական բառապաշարը՝ հնարավոր է դառնում ծանոթացնել ուսանողներին ուսումնասիրվող լեզվի երկրի աշխարհագրությանը, բնական հանածոներին, քաղաքներին, բնակչության կազմին և թվին, պատմությանը, մշակույթին, հանրահոշակ մարդկանց, պատմամշակութային նշանակություն ունեցող իրադարձություններին, դեպքերին և

անցքերին, մշակութային կոթողներին, հուշարձաններին, ազգային ավանդույթներին:
/Տե՛ս էջ 4/:

Վերոգրյալ նախադասության մեջ պարզ չէ, թե հեղինակն ինչ ի նկատի ունի:

2/կրկնաբանություն/տավտոլոգիա/՝

Հիմնավորվել է իսպաներենի, անգլերենի և հայերենի բառային, մշակութային, միջմշակութային, գործաբանական փոխներթափանցման երևույթների կանխման և հաղթահարման մեթոդական համակարգը, ըստ որի՝ ուսուցման բոլոր փուլերում իսպաներենի, անգլերենի երկրագիտական ուղղվածության բառապաշարի ուսուցումը նպաստում է ոչ միայն մասնագիտական բառապաշարի յուրացմանը, այլև գործաբանական, միջմշակութային, հաղորդակցական կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը: /Տե՛ս էջ 5/:

Լավ կլիներ, կրկնվող բառը փոխարինել հոմանիշով, կամ նախադասությունը վերաձևակերպել կրկնաբանությունից խուսափելու նպատակով:

Այնուամենայնիվ, նշված թերությունները չեն նվազեցնում հետազոտության գիտական արժեքը, և կարծում եմ, հաշվի կառնվեն հետագայում՝ շարադրված մտքերում՝ ոճական անհարթություններից խուսափելու և ակադեմիական հայերենը կատարելագործելու և նպատակով:

Հինգերորդ՝ ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ ավելի տեսանելիորեն ներկայացվեր մշակված մեթոդական համակարգի հնարավոր կիրառելիությունը ոչ միայն իսպաներենի, այլև այլ օտար լեզուների երկրագիտական բառապաշարի ուսուցման մեջ: Հետազոտության մեթոդական մոդելը ունի ընդհանրացման ներուժ, և այդ ներուժի ընդգծումը կարող էր բարձրացնել աշխատանքի տեսական արժեքը:

Նշված դիտարկումները, սակայն, չեն ստվերում ատենախոսության գիտական և գործնական արժեքը: Դրանք հիմնականում վերաբերում են աշխատանքի որոշ դրույթների առավել հստակեցմանը և կառուցվածքային կատարելագործմանը:

Քրիստինե Արայի Բաբայանի «Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական և գիտագործնական արժեք ունեցող հետազոտություն է: Հեղինակը կարողացել է հիմնավորել ընտրված թեմայի արդիականությունը, ձևակերպել հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը և խնդիրները, ուսումնասիրել համապատասխան գիտամեթոդական գրականությունը, մշակել իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգ, փորձարարական եղանակով ստուգել դրա արդյունավետությունը և ներկայացնել հիմնավորված եզրակացություններ:

Աշխատանքը համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությանը ներկայացվող հիմնական պահանջներին: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները: Հրապարակված աշխատանքները, ըստ ներկայացված տվյալների, արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Ելնելով վերոգրյալից՝ եզրակացնում են, որ Քրիստինե Արայի Բաբայանի «Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջները, իսկ հեղինակը՝ իսկ նրա հեղինակը՝ Քրիստինե Արայի Բաբայանն արժանի է իր կողմից հայցած՝ ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման

մեթոդիկա» /իսպաներեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Լուսինե Հրանտի Ֆլյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Հյուսիսային համալսարանի ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր

Ստորագրություն՝

Ամսաթիվ՝ __18.06.2026.

Հաստատում եմ պաշտոնական ընդդիմադրական քվեի չափով ձեր գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Հրանտի Ֆլյանի պաշտոնավարումը:



Աստղիկ Աշոտի Աբրահամյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Հյուսիսային համալսարանի գիտքարտուղար

18.06.2026